«Յուքոմ» ՓԲԸ
ՀՀ, Երևան 0069,
Դավիթ Անհաղթի 8/4
Հեռ.՝ +374 (11) 400 400
Ֆաքս՝ +374 (11) 400 401
էլ. փոստ՝ info@ucom.am
www.ucom.am

0170514

Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման պայմանագիր

N 0000/23/11/2021

ք. Երևան

«23» նոյեմբեր 2021թ.

Յուքոմ ՓԲ Ընկերությունը, ի դեմս ընկերության կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար Դավիթ Միրաքյանի, ով գործում է 13.04.2021թ.-ին տրված լիազորագրի հիման վրա, այսուհետ՝ «Օպերատոր», մի կողմից, և «ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտե» պետական մարմինը, ի դեմս գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Գերասիմ Մկրտչյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Բաժանորդ», մյուս կողմից (այսուհետ՝ Բաժանորդը և Օպերատորը միասին՝ «Կողմեր», իսկ առանձին՝ «Կողմ»), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ «Պայմանագիր») հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Օպերատորը պարտավորվում է Բաժանորդին մատուցել էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ (այսուհետ՝ «Ծառայություն» կամ «Ծառայություններ»), որոնց նկարագրության, քանակի և սակագնային փաթեթների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածներում և/կամ Օպերատորի պաշտոնական վեբ կայքում (www.ucom.am), իսկ Բաժանորդը պարտավորվում է վճարել Ծառայությունների համար՝ Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

2. Ծառայությունների մատուցման հիմնական պայմանները

2.1. Օպերատորի կողմից մատուցվող Ծառայությունները պատշաճ կերպով ստանալու համար Պայմանագիրը ստորագրելուց հետո անհրաժեշտության դեպքում Օպերատորի կողմից Բաժանորդին է տրամադրվում Սարք:

2.2. Պայմանագրի իմաստով «Սարք» է համարվում այն սարքավորումը կամ սարքավորումները, որոնց միջոցով Օպերատորը մատուցում է իր Ծառայությունները:

2.3. Օպերատորի կողմից Սարքը տեղադրելուց, կարգաբերելուց և այն Բաժանորդի տիրապետմանը հանձնելուց հետո Բաժանորդի և Օպերատորի միջև կնքվում է Սարքի հանձնման-ընդունման ակտ, որը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

2.4. Բաժանորդն ընդունում է, որ Սարքը համարվում է Օպերատորի կողմից պատշաճ կերպով տեղադրված, կարգաբերված և իրեն հանձնված Օպերատորի կողմից Բաժանորդին Պայմանագրով նախատեսված Ծառայությունները փաստացի մատուցելու պահից:

2.5. Օպերատորի կողմից տրամադրվող Սարքը, մալուխը, դրանց պատկանելիքներն ու մասերը, ինչպես նաև Օպերատորի կողմից դրանց վրա կատարված ցանկացած փոփոխության և/կամ վերանորոգման արդյունք, եթե այլ բան գրավոր կերպով նախատեսված չէ Կողմերի միջև, համարվում են Օպերատորի սեփականությունը:

2.6. Բաժանորդը չի կարող իրեն տրամադրված Սարքը, մալուխը, դրանց պատկանելիքներն ու մասերը վճարովի կամ անհատույց հիմունքներով փոխանցել, վարձակալությամբ տրամադրել երրորդ անձի կամ որևէ փոփոխության ենթարկել: Պայմանագրի լուծման դեպքում Օպերատորի կողմից տրամադրված Սարքը, մալուխը, դրանց պատկանելիքներն ու մասերը վերադարձվում են Օպերատորին:

2.7. Բաժանորդը պարտավոր է փոխհատուցել իր կողմից Սարքի անբարեխիղճ պահպանման, ոչ լիազորված վերանորոգման, Սարքի վրա տեղադրված հոլոգրաֆիկ տարբերանշանի կանխամտածված ջնջման, փոփոխման կամ այլ կերպ վնասման հետևանքով Օպերատորին հասցված բոլոր վնասները:

2.8. Սարքերի տեղադրման, կարգաբերման, Բաժանորդին հանձնման, սպասարկման և այլ անհրաժեշտ աշխատանքների իրականացման բացառիկ իրավունքը պատկանում է Օպերատորի աշխատակիցներին:

2.9. Այն դեպքում, երբ Ծառայությունը մատուցվում է Օպերատորի կողմից տրամադրվող մալուխով, Բաժանորդը պատասխանատու է Ծառայության մատուցման հասցեում մալուխի անցկացման և վերջինիս անցկացման համար անհրաժեշտ թույլտվությունների ձեռքբերման համար:

2.10. Ծառայությունների մատուցման նպատակով Օպերատորի կողմից իրականացվող համակցման աշխատանքների արժեքը այդ աշխատանքների ընթացքում օգտագործված օպտիկական մալուխի յուրաքանչյուր մեկ մետրի համար կազմում է 400 (չորս հարյուր) ՀՀ դրամ, իսկ օգտագործված ներքին լարանցման մալուխի (UTP) յուրաքանչյուր մեկ մետրի համար՝ 150 (մեկ հարյուր հիսուն) ՀՀ դրամ՝ սկսած օգտագործված օպտիկական մալուխի և/կամ ներքին լարանցման մալուխի (UTP) 51 (հիսունմեկ) մետրից: Բաժանորդը պարտավորվում է վճարել սույն կետի համաձայն իրականացված համակցման աշխատանքների դիմաց Օպերատորի կողմից ներկայացված հարկային հաշիվը ստանալուց հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

2.11. Կողմերը սույնով ընդունում և համաձայնվում են, որ համակցման աշխատանքներից առաջ կատարված չափագրման ժամանակ հաշվված մալուխների երկարությունը կարող է տարբերվել համակցման աշխատանքների ընթացքում փաստացի օգտագործված մալուխների երկարությունից, ուստի համակցման աշխատանքների դիմաց վճարելու ժամանակ հիմք է ընդունվում ոչ թե չափագրման ժամանակ հաշվված մալուխների երկարությունը, այլ Սարքի հանձնման-ընդունման ակտում նշված՝ փաստացի օգտագործված մալուխների երկարությունը:

2.12. Բաժանորդը պարտավորվում է Պայմանագրով մատուցվող Ծառայություններից օգտվել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան:

2.13. Ֆիքսված հեռախոսակապի ծառայությունից օգտվելու դեպքում Բաժանորդը պարտավորվում է իրեն տրամադրված հեռախոսահամարն օգտագործել այն աշխարհագրական տարածքում, որի համար, համաձայն ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 20.12.2012թ. թիվ 540Ա որոշման, հատկացված է տվյալ տարածքային կոդը:

2.14. Պայմանագրի 2.13. կետը խախտելու դեպքում Բաժանորդը պարտավորվում է Օպերատորին ամբողջությամբ փոխհատուցել վերջինիս կրած բոլոր վնասները՝ Օպերատորի կողմից այդ մասին Բաժանորդին ծանուցելուց հետո 7 (յոթ) օրվա ընթացքում:

2.15. Բաժանորդն իրավունք չունի Պայմանագրով իրեն տրամադրվող Ծառայությունները և/կամ դրանց մի մասը և/կամ որևէ իրավունք որևէ կերպ փոխանցելու (տրամադրելու) ինտերնետային ծառայություններ (էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ) մատուցող այլ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց:

3. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

3.1. Օպերատորն իրավունք ունի՝

3.1.1 Բաժանորդից պահանջել ժամանակին վճարելու Պայմանագրով փաստացի մատուցված Ծառայությունների դիմաց,

3.1.2 Բաժանորդի կողմից Պայմանագրի պայմանների և կետերի խախտման դեպքում միակողմանի հրաժարվել Պայմանագրի կատարումից և ապամոնտաժել իր կողմից տեղադրված մալուխներն ու Սարքը,

3.1.3 մատուցված Ծառայությունների դիմաց Բաժանորդի կողմից Պայմանագրի 5.1. կետով սահմանված ժամկետում վճարում չկատարելու դեպքում իր հայեցողությամբ Բաժանորդից պահանջել վճարելու տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար ամսական վճարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով և/կամ ժամանակավորապես դադարեցնել Բաժանորդին Ծառայությունների մատուցումը՝ մինչև գոյացած պարտքի ամբողջական մարումը,

3.1.4 դադարեցնել Ծառայությունների մատուցումը և լուծել Պայմանագիրը՝ Բաժանորդի կողմից ինտերնետ մուտքի հնարավորությունը ինտերնետի մյուս տերմինալների կամ բաժանորդների նկատմամբ վնասակար գործողությունների իրականացման նպատակով օգտագործելու, ինտերնետ ցանցի էթիկայի կանոններին հակասող գործողություններ իրականացնելու դեպքում, ինչպիսիք են SPAM-ի (անանուն, անցանկալի հաղորդագրությունների) ուղարկումը, հակաօրենսդրական գործողություններ խրախուսող նյութերի տարածումը, ցանցում գտնվող համակարգիչների նկատմամբ ծրագրային կամ ապարատային ոտնձգությունները (հակերությունը):

3.2. Օպերատորը պարտավոր է՝

3.2.1 Ծառայությունները մատուցել պատշաճ որակով՝ Պայմանագրում ամրագրված պայմաններին և ժամկետներին համապատասխան,

3.2.2 Պայմանագրի գործողության ընթացքում Ծառայությունից օգտվելու համար Բաժանորդին տրամադրել Սարքը և/կամ Ծառայության մատուցման հասցե(ներ)ում տեղադրել և կարգաբերել Սարքն ու միացնել Բաժանորդին իր հեռահաղորդակցության ցանցին,

3.2.3 ողջամիտ ժամկետում անհատույց իրականացնել Սարքի վերանորոգման աշխատանքները և վերացնել Սարքի ի հայտ եկած արտադրական սխալներն ու անսարքությունները՝ Սարքի արտադրական խոտանի դեպքում և/կամ եթե Սարքի սխալներն ու անսարքությունները չեն առաջացել Բաժանորդի կողմից Սարքի սխալ և/կամ ոչ պատշաճ օգտագործման հետևանքով,

3.2.4 սակագների փոփոխությունների մասին Բաժանորդին տեղյակ պահել նոր սակագների կիրառումից առնվազն 30 (երեսուն) օր առաջ:

3.3. Բաժանորդն իրավունք ունի՝

3.3.1 պահանջել Օպերատորից Պայմանագրի կնքման պահից սկսած 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում իրեն տրամադրել Պայմանագրի 1.1. կետում նշված Ծառայությունները, եթե Ծառայությունների տրամադրման ընթացքում ի հայտ չեն եկել անլուծելի տեխնիկական խնդիրներ,
3.3.2 պահանջել Օպերատորից իրեն տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն՝ մատուցվող Ծառայություններից ճիշտ և անվտանգ օգտվելու համար:

3.4. Բաժանորդը պարտավոր է՝

3.4.1 ժամանակին և Պայմանագրով սահմանված կարգով վճարել փաստացի մատուցված Ծառայությունների համար Պայմանագրի հավելված(ներ)ով նախատեսված վճարը, անգամ եթե Օպերատորի հսկողությունից դուրս գտնվող տեխնիկական կամ այլ պատճառների հետևանքով Բաժանորդը չի օգտվել Ծառայություններից կամ եթե վերջինս չի կարողացել կարգաբերել սեփական ցանցը և ապահովել Ծառայությունների որակյալ ընդունումը:

4. Ծառայությունների մատուցման կասեցումը, դադարեցումը և վերաակտիվացումը

4.1. Օպերատորն իրավունք ունի կասեցնել, սահմանափակել կամ դադարեցնել Բաժանորդին մատուցվող Ծառայությունները՝ առանց այդ մասին վերջինիս նախապես ծանուցելու, եթե Բաժանորդը՝

4.1.1 օգտագործել է չսերտիֆիկացված և/կամ Օպերատորի ցանցի հետ անհամատեղելի կամ ցանցի պատշաճ աշխատանքին խոչընդոտող սարք,
4.1.2. խախտել է Պայմանագրի պայմանները կամ ՀՀ գործող օրենսդրության պահանջները:

4.2. Բաժանորդը կարող է ժամանակավորապես կասեցնել/դադարեցնել իրեն մատուցվող Ծառայությունները 10 (տասը) օրից մինչև 2 (երկու) ամիս ժամկետով՝ Օպերատորին ներկայացնելով համապատասխան դիմում և ամբողջությամբ վճարելով մինչ այդ օրն իրեն մատուցված Ծառայությունների դիմաց:

4.3.Բաժանորդի կողմից դիմումում նշված Ծառայությունների մատուցումը ժամանակավորապես կասեցնելու/դադարեցնելու ժամկետը լրանալուց հետո Բաժանորդին մատուցվող Ծառայություններն ավտոմատ կերպով վերսկսվում են: Եթե Բաժանորդը ցանկանում է ժամանակավորապես կասեցնել/դադարեցնել իրեն մատուցվող Ծառայություններն ավելի քան երկամսյա ժամկետով, ապա նա համապատասխան դիմումը ներկայացնելուց հետո պարտավոր է Օպերատորին հետ վերադարձնել Սարքը՝ կատարելով համապատասխան վճարումներ, եթե այդպիսիք սահմանված են Օպերատորի կողմից, այդ թվում՝ վճարային պարտքը, տույժերը, Օպերատորի կողմից կատարված աշխատանքների և այլ փաստացի կատարված ծախսերի դիմաց վճարները:
4.4. Եթե Բաժանորդն օգտվում է Օպերատորի կողմից մատուցվող 1-ից (մեկից) ավելի Ծառայություններից, ապա այդ Ծառայություններից որևէ մեկի համար Պայմանագրով սահմանված ժամկետում չվճարելու դեպքում Օպերատորն իրավունք ունի Ծառայությունների մատուցման կասեցումը կամ սահմանափակումը կիրառել Բաժանորդին մատուցվող մյուս բոլոր Ծառայությունների նկատմամբ:

5. Ծառայությունների գինը և վճարման կարգը

5.1. Բաժանորդը Պայմանագրով սահմանված Ծառայությունների համար վճարում է Օպերատորի կողմից ներկայացված հարկային հաշվի հիման վրա Ծառայությունների մատուցման յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո առավելագույնը 45 (քառասունհինգ) օրվա ընթացքում:
5.2. Բաժանորդի կողմից Պայմանագրով սահմանված Ծառայությունների համար վճարումը համարվում է կատարված Օպերատորի կողմից Բաժանորդին ներկայացված հարկային հաշվում նշված Օպերատորի բանկային հաշվեհամարին վճարումը (գումարը) մուտք լինելու պահից:

5.3. Ծառայությունների մատուցման ամսվա ընթացքում Օպերատորի մեղքով (Օպերատորի ցանցի անսարքությունների հնարավոր անջատումների) առաջացած թերությունների ընդհանուր ժամանակահատվածը, որը հաշվառվում է Օպերատորի անսարքության քարտերի համակարգում, չպետք է գերազանցի ամսական թույլատրելի սահմանաչափը՝ 16 (տասնվեց) ժամը: Ամսական այդ թույլատրելի սահմանաչափը գերազանցող ժամանակահատվածի համար կատարվում է Ծառայության ամսական վճարի նվազեցում, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$A = \frac{B \times C}{D}$$

Որտեղ՝

A - Ծառայությունների ամսական վճարից նվազեցվող գումար

B - Ծառայությունների ամսական արժեք

C - Ամսական թույլատրելի սահմանաչափը գերազանցող ժամերի քանակ

D - Միջին ամսական ժամերի քանակ, որը հավասար է 729.6 (30.4 /միջին ամսական օրերի թիվ/ x 24 /1 օրվա ժամերի քանակ/):

5.4. Պայմանագրի հավելված(ներ)ով սահմանված վճարներից բացի, հեռուստատեսային և ֆիքսված հեռախոսակապի առանձին ծառայություններից օգտվելու դեպքում Բաժանորդից կարող են գանձվել հավելյալ վճարներ՝ Օպերատորի վեբ կայքում տեղադրված և Օպերատորի սպասարկման գրասենյակներում ներկայացված պայմաններին և սակագներին համապատասխան:

5.5. Պայմանագրի հավելված(ներ)ով սահմանված ֆիքսված հեռախոսակապի ծառայության վճարը համարվում է բաժանորդավճար (ամսավճար), որը գանձվում է Բաժանորդից՝ անկախ վերջինիս կողմից տվյալ ամսվա ընթացքում հեռախոսակապի ծառայությունից օգտվելու հանգամանքից, հեռախոսակապի ծառայությունից օգտվելու օրերի կամ նշված ծառայության դադարեցված/կասեցված օրերի քանակից:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Օրենքի թույլատրելի սահմաններում Կողմերը սույնով հրաժարվում են միմյանց անուղղակի վնասների և բաց թողնված օգուտների հատուցման պահանջներից: Ցանկացած պարագայում Օպերատորի պատասխանատվությունը Բաժանորդի հանդեպ չի կարող գերազանցել Բաժանորդին մատուցվող Ծառայությունների դիմաց տվյալ ամսվա համար գանձվող ամսական գումարի՝ Օպերատորի մեղքով Ծառայություններից օգտվելու անհնարինության ժամկետին համամասնորեն հաշվարկված գումարը:

6.2. Բաժանորդը պարտավորվում է Պայմանագրի լուծման դեպքում (անկախ լուծման պատճառներից) Սարքը, մալուխը, դրանց պատկանելիքներն ու մասերը 15 (տասնհինգ) օրվա ընթացքում սարքին վիճակում (հաշվի առնելով դրանց բնական մաշվածությունը) վերադարձնել Օպերատորին կամ հնարավորություն ստեղծել Օպերատորի մասնագետների համար ապամոնտաժելու դրանք:

6.3. Պայմանագրի 6.2. կետով նախատեսված ժամկետում Սարքը, մալուխը, դրանց պատկանելիքներն ու մասերն Օպերատորին չվերադարձնելու կամ դրանց ապամոնտաժման հնարավորություն չստեղծելու կամ նման հնարավորությունը սահմանափակելու դեպքում Բաժանորդը պարտավորվում է 5 (հինգ) օրվա ընթացքում Օպերատորին վճարել Սարքի հանձնման-ընդունման ակտի մեջ նշված Սարքի, մալուխի, դրանց պատկանելիքների ու մասերի արժեքը, որոնցից նվազեցվում է բնական մաշվածության համար հաշվարկվող գումարը:

6.4. Պայմանագրի 6.3. կետում նշված ժամկետում Սարքի, մալուխի, դրանց պատկանելիքների ու մասերի արժեքը չվճարելու դեպքում Օպերատորն իրավունք ունի իր հայեցողությամբ Բաժանորդից պահանջել վճարելու տույժ՝ ուշացված յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5. Օպերատորը պատասխանատվություն չի կրում.

6.5.1 դժբախտ պատահարի կամ իր գործընկերների (այդ թվում՝ օտարերկրյա) կամ գործակալների միջոցով փոխանցվող ազդանշանների կամ մատուցվող Ծառայությունների խափանման կամ դադարեցման հետևանքով առաջացած ընդհատումների, անջատումների, խափանումների կամ որոշակի տեսակի Ծառայությունների մեջ կատարված փոփոխությունների համար,

6.5.2 Բաժանորդին պատկանող համակարգչի/ների կամ այլ սարքավորման/ումների անսարքության պատճառով Ծառայությունների պատշաճ չընդունման կամ ընդհատման համար,

6.5.3 աշխատանքների, մասնավորապես՝ ընթացիկ, ցանցի ամրապնդման, պահպանման, ընդարձակման կամ վերանորոգման հետևանքով առաջացած ընդհատումների և խափանումների համար, եթե դրանք չեն գերազանցում ամսական 16 (տասնվեց) ժամը:

6.6. Ինտերնետ հասանելիության ծառայության մատուցման դեպքում Պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված(ներ)ում նշված սակագնային փաթեթ(ներ)ի համար սահմանված արագությունները նախատեսված են Օպերատորի պաշտոնական վեբ կայքում նշված քանակով համակարգիչների միացման և օգտագործման համար: Սահմանված քանակից ավել համակարգիչներ ցանցին միացնելու և ինտերնետ հասանելիության ծառայությունից օգտվելու դեպքում Ծառայությունների ընդհատումների, խափանումների և արագության անկման համար Օպերատորը որևէ պատասխանատվություն չի կրում:

6.7. Օպերատորը ոչ մի վերահսկողություն չի իրականացնում իր ցանցով տեղափոխվող տեղեկատվության նկատմամբ և պատասխանատու չէ Բաժանորդի կողմից ստացված տեղեկատվության և բովանդակության ճշտության համար: Օպերատորի ցանցի միջոցով տեղափոխվող ցանկացած տեղեկատվություն կամ բովանդակություն օգտագործվում է Բաժանորդի ռիսկով և պատասխանատվությամբ:

6.8. Օպերատորը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց կողմից ուղարկված սպամի, իրականացված հակերային գործունեության, վիրուսների փոխանցման և դրա արդյունքում Բաժանորդին պատճառված վնասների համար: Բաժանորդը պարտավոր է անձամբ պաշտպանել իր վերջնակետային սարքավորումը և համակարգերը վիրուսներից ու այլ անձանց անօրինական միջամտությունից և պատասխանատվություն է կրում նման վիրուսների կամ անօրինական միջամտության հետևանքով Օպերատորին և/կամ այլ անձանց պատճառված վնասի համար, ինչպես նաև կրում է նման վիրուսների կամ անօրինական միջամտության հետևանքով առաջացած պարտքերի մարման պարտավորությունը:

6.9. Բաժանորդն իրավունք չունի այլ անձի օտարել կամ փոխանցել Պայմանագրով ստանձնած իր իրավունքներն ու պարտականությունները: Բաժանորդն է Օպերատորի համար հանդիսանում միակ պատասխանատուն՝ Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, վճարումները ժամանակին չկատարելու, ինչպես նաև Օպերատորին պատճառված իրական վնասի համար:

6.10. Օպերատորը պատասխանատվություն չի կրում վճարումներն ընդունող միջնորդի կողմից սահմանված կանոնների համաձայն որևէ լրացուցիչ միջնորդավճարի գանձման համար:

6.11. Բաժանորդը պատասխանատու է Սարքի, ինչպես նաև Սարքն օգտագործելու համար հանձնման-ընդունման ակտի հիման վրա իրեն փոխանցված կամ Սարքին միացված սարքավորումների, մալուխների, լարերի և այլ պարագաների համար և դրանց փչացման, սխալ օգտագործման, կորստի, վնասվածքի կամ հափշտակության դեպքում պարտավոր է Օպերատորին փոխհատուցել դրանց արժեքը լրիվ ծավալով՝ պատճառված վնասին համամասնորեն:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է 1 (մեկ) տարի ժամկետով: Սույն պայմանագրի պայմանները կիրառվում են 22.10.2021թ. ծագած հարաբերությունների վրա (քաղ. օրենսգրքի 441 հոդվածի 2-րդ մաս): Պայմանագրի ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան 15 (տասնհինգ) օր առաջ մյուս Կողմին Պայմանագիրը լուծելու մասին գրավոր կերպով չտեղեկացնելու դեպքում Պայմանագրի գործողության ժամկետը յուրաքանչյուր անգամ երկարաձգվում է 1 (մեկ) տարի ժամկետով: Երկարաձգումների քանակը սահմանափակված չէ:

7.2 Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ: Նախաձեռնող Կողմը պարտավոր է այդ մասին գրավոր ծանուցում ուղարկել մյուս Կողմին առնվազն 30 (երեսուն) օր առաջ:

7.3 Պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված(ներ)ում նշված մատուցվող Ծառայությունների հասցե(ներ)ի փոփոխության դեպքում Բաժանորդը պարտավորվում է առնվազն 15 (տասնհինգ) օր առաջ այդ մասին ծանուցել Օպերատորին:

7.4Պայմանագրի գործողության դադարեցումը Կողմերին չի ազատում միմյանց նկատմամբ Պայմանագրի գործողության ընթացքում առաջացած պարտավորությունների կատարումից:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-մաժոր)

8.1. Պայմանագրով պարտավորությունները մասնակիորեն կամ ամբողջությամբ չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, սաբոտաժը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով սահմանված պարտականությունների կատարումը:

8.2. Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավել, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես գրավոր ծանուցելով մյուս Կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Պայմանագրի ցանկացած փոփոխություն կամ լրացում կատարվում է գրավոր՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ և կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

9.2.Կողմերի միջև Ծառայությունների մատուցման նպատակով իրականացված համակցման աշխատանքների կատարմանվերաբերյալ կնքված հանձնման-ընդունման և/կամ այլ ակտերի ու Պայմանագրի միջև հակասության դեպքում գերակայումեն Պայմանագրի դրույթները:

9.3. Կողմերը պարտավորվում են միջոցներ ձեռնարկել մյուս Կողմի գաղտնի տեղեկատվության պահպանման համար և չհրապարակել այն երրորդ անձանց առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության՝ բացառությամբ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

9.4. Կողմերը պարտավորվում են միջոցներ ձեռնարկել մյուս Կողմի գաղտնի տեղեկատվության պահպանման համար և չհրապարակել այն երրորդ անձանց առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության՝ բացառությամբ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

9.5. Կողմերի՝ Պայմանագրում նշված անվանման, գտնվելու վայրի, վավերապայմանների (հասցե, բանկային հաշվեհամար և այլն) փոփոխության, վերակազմակերպման կամ լուծարման դեպքում Կողմը պարտավոր է այդ մասին առնվազն 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել մյուս Կողմին:

9.6. Պայմանագրի գործողության ընթացքում Օպերատորն իրավասու է Բաժանորդին ծանուցել և վերջինիս հետ տեղեկատվություն փոխանակել ինչպես Պայմանագրում նշված Բաժանորդի էլեկտրոնային փոստով, այնպես էլ Պայմանագրում նշված հասցեով վերջինիս գրություններ առաքելու և ստանալու միջոցով:

9.7. Օպերատորի կողմից Պայմանագրով նախատեսված հասցեով կամ էլեկտրոնային փոստով Բաժանորդին ծանուցելը համարվում է պատշաճ ծանուցում, եթե Բաժանորդը Օպերատորին գրավոր ձևով չի տեղեկացրել իր հասցեի կամ էլեկտրոնային փոստի փոփոխման վերաբերյալ նման փոփոխությունից հետո առնվազն 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

9.8. Պայմանագրի շրջանակում Կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի վեճերի լուծումը հանձնել ՀՀ տարածքում իրավասու դատարանի քննությանը:

9.9.Կողմերն ընդունում են, որ սույն Պայմանագիրը կարող է կնքվել Պայմանագրի ստորագրված տարբերակները Կողմերի կողմից էլեկտրոնային հասցեներով փոխանակելու միջոցով: Նման եղանակով փոխանակված էլեկտրոնային փաստաթղթերն ունեն նույն իրավական նշանակությունը, ինչ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված և/կամ կնիքով վավերացված փաստաթղթերը: Նշված էլեկտրոնային փաստաթղթերը համարվում են բնօրինակներ և կարող են օգտագործվել որպես ապացույց դատարանում և վեճերի քննարկման մինչդատական վարույթում:

9.10.Պայմանագրին կից հավելվածները հանդիսանում են վերջինիս անբաժանելի մասը:

10. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Օպերատոր	Բաժանորդ
Յուքոմ ՓԲ Ընկերություն	ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտե պետական մարմին
Իրավ. հասցե՝ք. Երևան, Գր. Լուսավորիչ 9	Իր. հասցե՝ ք.Երևան, Վաղարշյան փողոց 13ա
Գործ. հասցե՝ ք. Երևան, Դավիթ Անհաղթի 8/4	Գործ. հասցե՝ ք.Երևան, Վաղարշյան փողոց 13ա
Հեռ.՝ 374 11 444444	Հեռ.՝ 096502050
Ֆաքս՝ 374 60 444441	Էլ փոստ՝ s.ghazaryan@anticorruption.am
ՀՎՀՀ՝ 00024873	ՀՎՀՀ՝ 00243582
Բանկ՝«Ամերիաբանկ» ՓԲԸ	
Հ/Հ 1570043102134100	

Կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար՝

_____Դավիթ Միրաքյան

Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝

_____Գերասիմ Մկրտչյան

Հավելված 1

«23» նոյեմբեր 2021թ. կնքված թիվ 0000/23/11/2021

էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների

մատուցման պայմանագրի

Ծառայության (Ծառայությունների) նկարագիրը, քանակը և սակագները

քաղաք Երևան

«23» նոյեմբեր 2021թ.

1. Տրամադրվող Ծառայություններ

N	Նկարագրություն	Ամսավճար ՀՀ դրամ	Հասցեներ
1	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900023	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
2	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900020	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
3	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900015	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
4	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900016	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
5	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900032	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
6	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900034	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
7	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900035	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
8	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900045	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
9	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900058	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
10	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900022	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
11	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900041	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
12	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900025	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա

13	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900053	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
14	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900026	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
15	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900027	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
16	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900029	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
17	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900030	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
18	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900057	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
19	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900036	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
20	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900037	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
21	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900031	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
22	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900017	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
23	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900018	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
24	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900019	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
25	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900014	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
26	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900049	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
27	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900055	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
28	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900043	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
29	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900044	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
30	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900047	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
31	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900051	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա

32	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900028	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
33	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900021	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
34	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900056	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
35	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900033	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
36	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900038	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
37	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900039	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
38	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900040	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
39	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900042	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
40	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900050	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
41	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900011	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
42	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900052	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
43	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900059	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
44	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900024	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
45	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900060	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
46	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900046	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
47	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900048	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
48	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900013	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
49	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900012	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
50	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900010	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա

51	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900008	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
52	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900002	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
53	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900004	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
54	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900005	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
55	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900007	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
56	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900006	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
57	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900003	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
58	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900001	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
59	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900054	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
60	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011781323	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
61	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011781322	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
62	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011781328	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
63	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011781327	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
64	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011781325	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
65	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011781324	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
66	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900062	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
67	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900061	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
68	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011781326	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
69	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900063	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա

70	U!Phone corporate SIP geo, Հեռ. համար/Phone N: 011900064 2.	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա
71	U!TV Select Corporate	2,500	ք.Երևան, Արաբկիր, Վաղարշյան փողոց 13ա

3. Ծառայությունների սակագները

1.1. Ծառայության (Ծառայությունների) ամսական վճարը կազմում է 177500 (հարյուր յոթանասունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ»:

Օպերատոր

Յուքոմ ՓԲ Ընկերություն
Իրավ. հասցե՝ ք. Երևան, Գր. Լուսավորիչ 9
Գործ. հասցե՝ ք. Երևան, Դավիթ Անհաղթի 8/4
Հեռ.՝ 374 11 444444
Ֆաքս՝ 374 60 444441
ՀՎՀՀ 00024873
Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570043102134100

Բաժանորդ

ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտե պետական մարմին
Իր. հասցե՝ ք.Երևան, Վաղարշյան փողոց 13ա
Գործ. հասցե՝ ք.Երևան, Վաղարշյան փողոց 13ա
Հեռ.՝ 096502050
Էլ փոստ՝ s.ghazaryan@anticorruption.am
ՀՎՀՀ՝ 00243582

Կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար՝

_____ Դավիթ Միրաքյան

Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝

_____ Գերասիմ Մկրտչյան

«Յուքոմ» ՓԲԸ
«Երևան Պլազա» բիզնես կենտրոն
ՀՀ, Երևան 0015, Գ. Լուսավորիչ 9
www.ucom.am

Հարցերի դեպքում զանգահարեք
444՝ Ucom հեռախոսահամարից,
+374 (11) 444 444՝ այլ հեռախոսահամարներից
էլ. փոստ՝ 444@ucom.am

"UCOM" CJSC
"Yerevan Plaza" business center
9 G. Lusavorich, Yerevan 0015, RA
www.ucom.am

For further questions, please call
444 from Ucom numbers
+374 (11) 444 444 from other numbers
E-mail: 444@ucom.am

SPEEDTEST AWARDS 2017
THE FASTEST MOBILE INTERNET IN ARMENIA

Բաժանորդային Պայմանագիր No /Subscription Agreement No 4288856

Դիմում
Հետվճարային հեռախոսակապի ծառայություններին հետվճարային ամսական բաժանորդագրության Application
Postpaid Monthly Subscription to Telephony Services

SIM քարտի համար /SIM NUMBER: 89374101911005657480

☐ **Ֆիզիկական անձ /Individual** ☑ **Իրավաբանական անձ /Legal entity**
☑ **Իրավաբանական անձ /Legal entity** ☐ **Անհատ ձեռնարկատեր /Private entrepreneur**

Կազմակերպության /Company Name: ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտե
Կազմակերպաիրավական ձևը/Juridical form:
Պետ. գրանցման տվյալներ/ State Registration Data: 264.184.1197550
ՀՎՀՀ /Tax code: 00243582
Հեռ. / Phone.:
Հասցե/Address: Վաղարշյան 13ա շենք, Երևան, ՀՀ

Ընկերության Տնօրեն / Company Director
Անուն,ազգանուն/Name, surname: Գերասիմ Մկրտչյան
Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ/ ID details: 010563708 08/03/2018 011
Հեռ. / Phone.:

Ընկերության լիազորված անձ /Company Representative
Անուն,ազգանուն/Name, surname: Գերասիմ Մկրտչյան
Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ/ ID details: 010563708 08/03/2018 011

Հաշվի առաքման եղանակ /Invoice delivery
☑ էլ. Փոստ/e-mail: s.ghazaryan@anticorruption.am

Ծառայության տեսակը /Subscription type:
Հետվճարային բաժանորդագրություն
/Postpaid subscription

Սակագնային պլան /Tariff plan:
Բիզնես 3 / Business 3

Սույն դիմումը, առկայության դեպքում դրա հավելվածների, Յուքոմ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Յուքոմ) պաշտոնական կայքում հրապարակված «Էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման ընդհանուր դրույթներ և պայմաններ»-ի, առանձին Ծառայություններին վերաբերող հատուկ դրույթներ և պայմանների, Ծառայությունների գնացուցակի, Սակագնային պլանի, Ծառայության առաջարկի նկարագրի, ինչպես նաև յուրաքանչյուր Ծառայությունից օգտվելու վերաբերյալ՝ Յուքոմի կողմից սահմանված կիրառելի կանոնների, կարգերի հետ միասին հանդիսանում են Ձեր և Յուքոմի միջև կնքված պարտադիր ուժ ունեցող Բաժանորդային Պայմանագիր: Ստորագրելով սույն դիմումը՝ Բաժանորդը հաստատում է, որ ամբողջությամբ ծանոթացել է Բաժանորդային Պայմանագրին, որի հետ լիովին համաձայն է, և տալիս է համաձայնություն իր կողմից Յուքոմի նկատմամբ ստանձնած պարտավորությունների և դրանց կատարման մասին տեղեկություններ, այդ թվում՝ վճարումների, պարտքերի, վճարումների սովորությունների մասին տեղեկություններ տրամադրել ՀՀ-ում գործող վարկային բյուրոներին՝ օրենքով սահմանված նպատակով օգտագործման համար:
*Բաժանորդի անձը հաստատող փաստաթղթի պատճենը կցված է սույն դիմումին՝ որպես Հավելված (այսուհետ՝ ԱՀՓ հավելված): Սույն դիմումում և ԱՀՓ հավելվածում պարունակվող տվյալների միջև տարբերության դեպքում գերակայում է

Բաժանորդի/Լիազորված անձի ստորագրություն /Subscriber`s/Authorized person`s signature:

Davit Yeremyan Gov

Յուքոմ ՓԲԸ /Ucom CJSC
Վաճառքի և սպասարկման մասնագետ՝ /Sales and Service Specialist
Յուքոմ սպասարկման կենտրոնի հասցե՝ /Ucom Service Center address
Ամսաթիվ /Date 25/11/2021

«Յուքոմ» ՓԲԸ
«Երևան Պլազա» բիզնես կենտրոն
ՀՀ, Երևան 0015, Գ. Լուսավորիչ 9
www.ucom.am

Հարցերի դեպքում զանգահարեք
444՝ Ucom հեռախոսահամարից,
+374 (11) 444 444՝ այլ հեռախոսահամարներից
էլ. փոստ՝ 444@ucom.am

"UCOM" CJSC
"Yerevan Plaza" business center
9 G. Lusavorich, Yerevan 0015, RA
www.ucom.am

For further questions, please call
444 from Ucom numbers
+374 (11) 444 444 from other numbers
E-mail: 444@ucom.am

SPEEDTEST AWARDS 2017
THE FASTEST MOBILE INTERNET IN ARMENIA

ԱՀՓ հավելվածը, որի հիման վրա Յուքոմն իրավասու է կատարել սույն դիմումում պարունակվող տվյալների համապատասխան փոփոխություններ և ճշգրտումներ: /This application, together with its appendices, if any, "General Terms and Conditions for Provision of Electronic Communications and Other Related Services", posted on the official website of Ucom CJSC (hereinafter "Ucom"), specific terms and conditions concerning separate Services, Service Pricelist, Tariff Plan, description of Service offer, as well as applicable rules and procedures concerning the use of each Service established by Ucom, shall constitute a binding Subscription Agreement between You and Ucom. By signing this application, the Subscriber confirms that he/she has fully read and agrees to the Subscription Agreement and gives his/her consent to provision of information regarding his/her obligations towards Ucom and the fulfillment thereof (including information about payments, debts, payment habits) to credit bureaus operating in the RA, to be used for the purposes stipulated by law.*The copy of subscriber`s ID document is attached hereto as an Appendix (hereinafter the "IDD appendix"). In case of inconsistencies between the data contained in this application and IDD appendix, the IDD appendix shall prevail, based on which Ucom shall have the right to correspondingly modify and correct the data contained in this application.

Բաժանորդի/Լիազորված անձի ստորագրություն
/Subscriber`s/Authorized person`s signature:

Յուքոմ ՓԲԸ /Ucom CJSC
Վաճառքի և սպասարկման մասնագետ՝ /Sales and Service Specialist
Յուքոմ սպասարկման կենտրոնի հասցե՝ /Ucom Service Center address
Ամսաթիվ /Date 25/11/2021

Davit Yeremyan Goy

«Յուքոմ» ՓԲԸ
«Երևան Պլազա» բիզնես կենտրոն
Գ.Լուսավորիչ 9, Երևան 0015, ՀՀ
Հարցերի դեպքում զանգահարեք
444՝ Ucom հեռախոսահամարից
+374 (11) 444 444՝ այլ հեռախոսահամարներից
էլ.Փոստ՝ 444@ucom.am
Վեբ կայք՝ www.ucom.am

"UCOM" CJSC
"Yerevan Plaza", business center
9 G. Lusavorich, Yerevan 0015, RA
For support call
444 from Ucom numbers
+374 (11) 444 444 from other numbers
E-mail: 444@ucom.am
Web: www.ucom.am

Բաժանորդային Պայմանագիր No /Subscription Agreement No 4288856

Հավելված 1 /Appendix 1

Ընկերության անվանում /Company Name: ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտե
Սակագնային պլան /Tariff plan: Բիզնես 3/Business 3
Գումարային սահմանաչափ /Credit limit: 500000 ՀՀԴ /AMD

Բաժանորդը հաստատում է, որ ծանոթացել է ներքոնշյալ Սակագնային տարբերակ(ներ)ի պայմաններին: / The subscriber confirms that he/she has familiarized himself/herself with the conditions of the below-mentioned Tariff option(s).

No	Հեռախոսա համար /Phone number	SIM քարտի համար /SIM card number	Սակագնային տարբերակ /Tariff option	ԲՓԽ /CUG	Կորպորատիվ ծառայությունների փաթեթ /Corp. services set	Գունավոր համար /Colored number
1	55125027	89374101911005657480	Բիզնես Ներցանցային 5 B /Business On-net 5 B		Ծառ.փաթեթ 16 /Services set 16	Ստանդարտ /Standard

Յուքոմ ՓԲԸ /Ucom CJSC
Վաճառքի և սպասարկման մասնագետ՝ /Sales and Service Specialist

անուն, ազգանուն, ստորագրություն/ name, surname, signature

Յուքոմ սպասարկման կենտրոնի հասցե՝ /Ucom Service Center address

Բաժանորդ՝ /Subscriber

Գերասիմ Մկրտչյան
անուն, ազգանուն, ստորագրություն/ name, surname, signature

Ամսաթիվ /Date 23/11/2021

«Յուքոմ» ՓԲԸ
«Երևան Պլազա» բիզնես կենտրոն
Գ.Լուսավորիչ 9, Երևան 0015, ՀՀ
Հարցերի դեպքում զանգահարեք
444՝ Ucom հեռախոսահամարից
+374 (11) 444 444՝ այլ հեռախոսահամարներից
էլ.Փոստ՝ 444@ucom.am
Վեբ կայք՝ www.ucom.am

"UCOM" CJSC
"Yerevan Plaza", business center
9 G. Lusavorich, Yerevan 0015, RA
For support call
444 from Ucom numbers
+374 (11) 444 444 from other numbers
E-mail: 444@ucom.am
Web: www.ucom.am

Բաժանորդային Պայմանագիր No /Subscription Agreement No 4288856

Կորպորատիվ ծառայությունների փաթեթ /Corporate service set

Բաժանորդն իրավասու է հիմնական հաշվի ներքո ակտիվացված յուրաքանչյուր հեռախոսագծի համար սահմանել Յուքոմի ծառայությունների փաթեթ (կորպորատիվ ծառայությունների փաթեթ): Կորպորատիվ ծառայությունների փաթեթները հնարավորություն են տալիս յուրաքանչյուր հեռախոսագծի համար որոշել կորպորատիվ հաշվից վճարվող զանգերի սահմանաչափը և այն ծառայությունները, որոնք հասանելի կլինեն կորպորատիվ ենթահաշվից: Հեռախոսագիծ օգտագործողը կարող է օգտվել Յուքոմի մնացած ծառայություններից՝ վերալիցքավորելով անհատական ենթահաշիվը:

Ստորև բերված աղյուսակի ձախ սյունակում նշված են ծառայությունները, իսկ վերին տողում՝ կորպորատիվ ծառայությունների փաթեթները: Եթե ծառայության դիմաց՝ համապատասխան կորպորատիվ ծառայությունների փաթեթի սյունակում դրված է «x» նշանը, ապա համապատասխան ծառայության համար վճարը գանձվում է Բաժանորդի կորպորատիվ հաշվից: «x» նշանի բացակայության դեպքում ծառայության համար վճարը գանձվում է անհատական ենթահաշվից: /The Subscriber is entitled to set Ucom service package per each line activated under the main account (corporate service set). Corporate service sets enable to set for each line the limit of calls to be charged from the corporate account and those services, which will be accessible from the corporate sub-account. The line user may benefit from other Ucom services by recharging the individual sub-account.

In the table below the left column specifies the services; the top row specifies the corporate service sets. If in front of the service, in the column of the appropriate corporate service set the symbol Xx* is indicated, then the payment for the appropriate service is charged from the corporate account of the Subscriber. If no XxX is indicated, then the service is charged from the individual sub-account.

Ծառայություններ, որոնց գումարը գանձվում է կորպորատիվ հաշվից /Services charged from corporate account	0A*	0B	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Բաժանորդների փակ խումբ /CUG			X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X
Ucom ցանցում ձայնային /տեսա-զանգեր /On-net voice/video calls					X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X
Զանգեր դեպի ֆիքսված համարներ /Calls to off-net fixed numbers						X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X
Այլ բջջային ցանցերի ձայնային/տեսազանգեր /Off-net other mobile voice/video calls						X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X
Կարճ հաղորդագրություն /SMS				X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X
MMS									X	X	X	X	X	X	X	X	X	X
GPRS												X		X	X	X	X	X
Միջազգային զանգեր /International calls								X		X			X		X	X	X	X
Ռոմինգ ծառայություն (ձայնային/GPRS/կարճ հաղորդակցություն/MMS) /Roaming service (voice/GPRS/SMS/MMS)							X				X		X	X			X	X
Պրեմիում ԱԱԾ /Premium VAS																X		X
Ձայնային փոստարկղ /Voice mail		X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X
Ամսավճար/ներառյալ ԲՓԽ /Monthly fee (incl. CUG)		X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X

*Եթե կորպորատիվ հաշվի ներքո ակտիվացված ենթահաշիվ օգտագործողը, որն օգտվում է OA Ծառայությունների փաթեթից, 2 (երկու) անընդմեջ ամսվա ընթացքում չի կատարում ելքային զանգեր, Յուքոմն իրեն իրավունք է վերապահում կասեցնել օգտագործողի հեռախոսագիծը: Հեռախոսագծի կասեցումից հետո 1 (մեկ) ամսվա ընթացքում ենթահաշիվ օգտագործողի կողմից անձնական հաշիվը վերալիցքավորելու և ելքային զանգ կատարելու միջոցով հեռախոսագիծը չվերաակտիվացնելու դեպքում այն կարող է դադարեցվել: /*If the user of the sub-account activated under the corporate account, who benefits from OA Service set, does not make outgoing calls for a period of 2 (two) consecutive months, Ucom reserves the right to suspend the userXs line. In case the sub-account user does not re-activate the line through recharging its personal account and making outgoing calls within 1 (one) month upon line suspension, the line can be cancelled.
** Ֆիքսված համարները կարող են օգտվել միայն կորպորատիվ ծառայությունների փաթեթ 1-ից և 6-ից: /**Fixed numbers can use only corporate service sets 1 and 6.

Յուքոմ ՓԲԸ /Ucom CJSC
Վաճառքի և սպասարկման մասնագետ՝ /Sales and Service Specialist

անուն, ազգանուն, ստորագրություն /name, surname, signature

Յուքոմ սպասարկման կենտրոնի հասցե՝ /Ucom Service Center address

Բաժանորդ՝ /Subscriber

Գերասիմ Մկրտչյան

անուն, ազգանուն, ստորագրություն /name, surname, signature

Ամսաթիվ /Date 23/11/2021